

1. Աշնանային
2. Հեքիաթ
3. Օրոր
4. Ակվարիչ
5. Կո քեզ D Mol N. 3
6. Կո քեզ H Mol N. 2

Տպագրութեան պատրաստ են մի շարք ժողովրդական երգեր գաշնամուրի չամար, երկու պիես վիօլոնչէլի համար, մի շարք (սէրֆա) ժողովրդական երգեր (ձայնի համար) զաշնամուրի ակօմպանիմէնտով, ժողովրդական երգեր (սէրֆա) սալոն օրկեստրի համար և ուրիշ բազմաթիւ զաշնամուրի պիեսներ, որոնք կատարուում են զանազան կոնցերտներում:

Պէտք է յիշեմ նաև այն, որ 1909 թիվն, երբ թիրլինից անցայ լենինգրադ, մուսյ նաև միաժամանակ համալսարանի ֆիզիգո—մաթէմատիկական ֆակուլտէտը, սակայն ժամանակ չունենալով կատարելագործւել երաժշտութեան մէջ և յաճախել համալսարանը, երրորդ կուրսից թողի համալսարանը և ամբողջապէս նիւթւեցի երաժշտական աշխատանքներիս:

Հրտ. Առաջ Երեսնեն



Ս. Ռ. ՓԱՅՑԵԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՄԱՎԵՐՁԻ ՀԱՆԴԵՍՆԵՐԸ

Մարզահանգիս. — Մրցանակարաշնութիւն. — Մեր Համալսարանականները

ՊԱՅՑՅՈՒԱԿԱՆ անձերու, ընտիր բազալթեան մը՝ հայերէ և իստալացիներէ բազացած, և յառկապէս դպրոցներու ներկայացուցիչ մարմիններու առջն՝ հայութեան այս նախանձելի սերունդը իր մաքին աշխայոյն ու իր մարմնոյն ճկուն կորպը ցուցուց ժամէ մ'աւելի տևեց անոնց մարզական ցոյցը, սակայն անդաւար շարժումն ու զանազան խումբերու միաժամանակ խառն և պէսպէս հրահանգները յարատեկ ծափերու արժանացան. անաւանդ որ այս անգամ թւա. կալոյ ընդհանուր հրամաններ միայն կու տար, զորս երազօքէն իրենց բաժիններուն կը հաղորդէին խմբապեաններն և զարմանալի կանոնաւրութեամբ գործադրել կու տային: Իրեւ ուս. կալոյի օգն. և փո-

իանորդ էր Հայկ Անմահեան, զլուխ խմբապետներու որ Յ մեղր բարձրութեան ցատրելով՝ ձողով՝ բուռն ծափեր խլեց. ինչպէս նաև երեք խմբապետներ, Արմեն Պայեան. բրձր. 2:80 Փիլիպպոս Նորհատան՝ 2:60, Բագրատ Մարգիսեան՝ 2:40, և Հրանտ Մանուկեան փողքահասակ պատմին՝ 2:20:

Քանի մը զժուար հրահանգներ՝ զորմեծ խումբեր կատարեցին՝ մեծապէս զնահատուեցան և ծափահարուեցան, ինչպէս Պաւամանի յենարաններով ևն...:

Հուսկ մեծապէս հետաքրքրեց ձեռցով զնդակի խաղը, ուր պատկերացաւ հայում մարզական վար հոգին և աշխայժը, միանգամայն այս խաղին գեղեցկութիւնը ուտնագունդին (foot-ball) վրայ:

* *

Քրտնաթոր ճիգերէ և աշխատանքէ վերջ նրան քաղցը է մշակին՝ հնձել ուրախութեամբ իր սպասած արդիւնքները:

Կրթական Հաստատութեանց սեմերէն ներ ամրող տարին այդ ակնկալութիւնն է որ կը տիրէ. և արդար է այդ, եթ անոնց կը սպառեն այդ շըշանին մէջ բո-

նպաստ զարգացման ուսանողաց՝ ժամանակիս պահանջման համաձայն:

Եւ այսօր անշուշտ միսիթարական է տարուան մը զեղեցիկ պառազները տեսնել, մանաւանդ նոր շըշանաւարտներու խումբը, որ գիտութեան խոչընդուներու դէմ մաքառելով իրը յաղթական յառաջ կը մատչի ու կը ճանչնայ վերահաս նոր պարտականութիւն մը իր Ազգին հանդէպ,



Մ. Ռ. Վրժ-ի այս տարուած ըթթացաւարտ աշակերտները
Ծեսչական Մարմարյան հետ

ԷՄ Թափով իրենց կարելի միջոցները, որպէս զի օր մը կարենան մարդկային ընկերութեան պարզգութեան հոգւով ու մտքով առողջ անդամներ, առողջ Հայեր:

Ներկայ տարեցրշանիս ալ ոչ նուազ ճիգեր թափուեցան նաև բարեյիշատակ Մուրասայ և Բիափայելի Հատատառութեան մէջ. միակ նպատակի մ'ուղղուած էին անոնք. — Ընտիր ու պատուական հայորդիներ տալ մը Ազգին: Եւ առ այս շխնայուեցան յիրաւի ոչ մէկ ջանք. նամանաւանդ մասնաւոր զարկ մը արտեցաւ ըստ կարելույն նորանոր մերուաներով ու մղումներով հետզետէ ճոխացնելու վարժարանը, և լայն միջոցներ ստեղծելու ի

գործելու այսուհետեւ ի նպաստ անոր կրօնին, անոր երկրին:

Շատ լաւ զգացումներ ունեցան հայ և օտար հանդիսականց Յուլիս 25-ին, երբ հաւաքուած Մ. Ռ. Վարժարանի պերճ դահլիճին մէջ հաճոյքով ունկնդիր կ'ըլլային կազմակերպուած ընտիր Նուազանանդէսին ու միանգամայն կը լսէին աշակերտաց յաջողութեանց յաղթանակները. կը տեսնէին մրցանակներու և վկայականներու բաշխումը ինքնին ճշմարիտ գնահատութիւններ էին թէ՝ ներկայութիւնը և թէ ծափերը պաշտօնական իշխանութեանց ու Մարմարյան բուռ, սրոնց ներկայ էին Ռիփտիս Վ. Հ. Աթոռակալ Վ. Ի. շուրջ:

Հանդէսն սկսաւ երեկոյեան ժամ 6-ին թւա, բնոցիլացուայի «Մուրատ-Շափայէկ» խմբերգով, ընկերակցութեամբ երածտոցործեաց, որ ունկնդրուեցաւ միշտ մինչ նոյն ափործելի և մողիչ տպաւորութեան տակ։ Աւելցնենց հոս, որ ի յիշատակ ։ Ներտիի մահուան 25 ամեակին՝ բոլոր յաջորդ երգերն ընտրուած էին խոտիլոյ այս պանծալի Երգահանի գործերէն։ Այսէս հետզետէ երգուեցան (Lombardi) Coro dei crociati e pellegrini; (Giovanna d'Arco) Sinfonia: - (Ernani) Congiura, atto 3. Խմբերգ և նուագախումբ, — «La forza del destino», finale atto 2. Խմբերգ և նուագախումբ, որոնց մէ իրացանչիւրը խանդավառ ծափերով վերջացան։ յատկապէս ջերմօրէն ծափահարուեցաւ կառավարիչը թոնցիլացրուա, որ երկար տարիներէ ի վեր ցոյց կու տայ իր փորձ արուեստագէտի ճաշակն ու ըմբռնողութիւնը։

Ընդ մէջ նուագուած կտորներու՝ շրջանաւարու աշակերտներէն պարոնայց թովակի Մանուէլեան, Միքայէլ Միմիտեան և Ռաֆայէլ Ճանիկեան հայերէն, զաղղիերէն և խոտակերէն լեզուներով երախտագիտութեան և հրամաշախ զգայուն խօսքերը ուղղեցին Միքարանութեանս, ինչպէս նաև Վարժարանին տեսուչ Հ. Թ. Վ. Թովմանանի և անոր գործակից վարդապետացաց և ուսուցչաց։ Խրախոյս ու քաջալիքը ուղղեցին նաև իրենց հետեւրդ ներկերներուն, սրտագին մաղթանըներ ընելով յաջողութեամբ կորելու իրենց ուսման ճանապարհ։

Վկայականաց բաշխումը զեռ շսկսած Մեծ Տիտու Վ. Ռ բեմէն խօսեցաւ իր Հոսոկ բանքը առ նոր շրջանաւարուները։ Նախ նորիկակալութիւն յայտնեց բոլոր ներկաներուն, որոնք կը պատուէին իրենց թանկագին ներկայութեամբ։ մասնաւորապէս նորիկակալ եղաւ Գաղղիոյ Ճիւպաստուին՝ որ թէ իր և թէ իր պետութեան Արտ. Գործոց նախարարութեան կողմանէ՝ իր քաջալիքութիւն աշակերտաց՝ ընտիր գործեր դրած էր մրցանակներուն մէջ։

Իր խոր շնորհակալիքն ուղղեց նաև վարժարանի բոլոր ուսուցչապետներուն, որոնց կարևոր դեր ունեցած են այս ուսականիւններուն մէջ։ Հանդիսականաց ծափերը, որ մերթ անհամբեր դառնալով կը ընդհատէին զեղեցիկ բանախօս սովորիւնը, տարափագին լսուեցաւ ամեսնէն զերջ՝ ի նշան մաղթանաց հաւառութեան։

Ապա բեմ եւաւ վարժարանին Ուսումնապետը Հ. Արագինը Ուլունոնեան և հրատարակեց նոր Շըշանաւարուներու անունները, որոնց ծափերու մէջ ընդունեցան մի առ մի հրաւիրեալներու մեռքէն իրենց վկայականները։

Կը նշանակենց հոս անոնց անունները։

Վահրամ Նուրիխանն — Պաթում

Վահին Ֆէսնեան — Կ. Պոլիս

Ազատ Շովիկեան — Կ. Պոլիս

Հայկ Անաւոննան — Տրավիգոն

Լինէսթ Թախիթանեան — Տրավիգոն

Ցովսէփ Մանուէլեան — Գաղատիա

Փիլիպպոս Նորինաւսանն — Խուռնաւէիլ (Սերաստիա)

Միքայէլ Միմիտեան — Կ. Պոլիս

Արամ Գալաֆիսան — Կ. Պոլիս

Ռափայէլ Ճանիկեան — Խոտորջուր

Ցովսիմնիւս Քէսէնեան — Գաղատիա

Սիմոն Պայեան — Պաթում

Բագարայ Սարգիսեան — Կարս

Եղուարդ Ազարեան — Կ. Պոլիս

Հուսկ կատարուեցաւ մրցանակարաշխութիւնը և աշակերտներէն քաջագոյններն ստացան մեծարժէց ու կարևոր գրքեր։

Ի սրտէ կը շնորհաւորենք այս նոր շրջանաւարուները և կը մաղթենց որ յառաջիկայ կեանքի ասպարէկին մէջ փայլուն ու յաջողալից գործերով պատուարեր և օգտակար անհատները ըլլան Հայ Ազգիւ։

*
**

Գոհութեամբ կը հաղորդենց, ո՞ւ այս
տարի վերոյիշեալ նոր շրջանաւարտնե-
րէն երեց ամենացածերն սոտացան Մ.
Ռաֆայելեան պոտսեր, որոնցով պիտի
կարենան մտնել Պետական Համալսարան-
ները՝ հետևելու բարձրագոյն ճիւղերու։
Միաբանութիւնս միշտ զարժարած է
այսպէս՝ ի ձեռքին ունեցած Մ. Ռաֆայե-
լեան պոտսերով՝ Հաստատութեան կարո-
ղագոյն սաները, որոնց ի սկզբանէ մինչև
ցայսօր կարեոր թիւ մը կազմեն։ Մենք
ասկէ երեց տարի առաջ Բատուայի Հա-
մալսարանի Յորելեանին առթիւ զրած ենց
աթիէն ցանկ մը ամսաթերթիս մէջ՝ մի
միայն այն ուսանողներուն՝ որոնց պատ-
կաւորուած են սոյն բաղացի Պետական
Համալսարանէն։

Այդ թուականէն ասղին իր համալսա-
րանական ուսանող ունեցած ենց (միայն
հաշուելով զանազան Համալսարաններու
մեր բոլոր սաները), հետևեալները։

1928 Գոնստաբնեան Եղուարդ

Թաշնեան Յակոբ

Սոլյեան Պողոս

Մարտիրոսեան Սարգիս

Գրըգնեան Գրիգոր

Օրագեան Արտաշէս

Գումրուեան Յակոբ

Նահապետեան Ռուբէն

1924 Շիրինեան Հայկաղուն

Պոտուեան Յովհաննէս

Խաչատրուեւսն Անարոն

Մարիմեան Պարգեւ

Տէրմէննեան Անոտոն

Անէմեսն Յարութիւն

Մարտիկեան Պարոյը

Սիլունեան Արտաշէս

Կիւրնեան Գրիգոր

Հուսաղեան Արայ

Գասպարեան Կարապետ

Գաւաժեան Վահե

Անմշան Կարախիս

1925

Անէմեսն Յարութիւն

Մարտիկեան Պարոյը

Սիլունեան Արտաշէս

Կիւրնեան Գրիգոր

Հուսաղեան Արայ

Գասպարեան Կարապետ

Գաւաժեան Վահե

Անմշան Կարախիս

Այս թիւին մէջ՝ յատկապէս յիշատա-
կել կ'ուզենց, թէ վերոյիշեալներէն Պ. Յա-
րութիւն Անեմեան, Ուսանող Նկարչու-
թեան վենեստկոյ Գեղարուեստից Վարժա-
րանի՝ ինչպէս ամէն տարի՝ նաև այս տարի
բոլոր իր աշակերտակիցներուն մէջ ամե-
նափայլունն հանդիսացած է գարձեալ,
Վարժարանին հիացման ու գնահատումին
մասնաւոր տարրան զառնալով։ Պ. Անէ-
մեան յետ մեծ յաջողութեամբ ստանալու
մակարդյուրեան տիտղոսը՝ ներկայացեր
է այս անգամ Նարոյիի, Հոռվմայ և Վե-
նեստկոյ Պետական Գեղար. Վարժարան-
ներու Ուսուցչապետներէն Կազմուած
Յանձնախումբի մը զիմաց և 8 մրցա-
կիցներու մէջ առաջնութիւն շահնելով վար-
ժառորուեր է նաև ոսկի մնալով։

Զիրմօրէն կուրախակցինք մեր այս նոր
արուեստագէտին ձեռց բերած ցայտուն
յաջողութեանց, ու կը մազթենց որ յա-
ռաջիկային ըլլայ մեր հայրենի երկնա-
կամարին վրայ շրեղափառ ասող մը ի
պարժանս Հայութեան և ի պատիւ Մ.
Ռ. Հաստատութեան։

ԽՄԲ.